դագաղ նշանաց (περὶ διοσημείων) գիրք մի, յորում իւրաքանչիւր ամսոց և օրերուն վրայ բաժներ է օդային կամ երկնից նշանները և գուշակութիւնները։ Եթէ ուզէ մարդ հաւմամտել Յաղագաղ ալնպց և նշանաց և Շերակացւոյ ընծայուած ուրիշ գրութիւնները վերդիրեալ Յաղագաղ նշանաց գրքին հետ, ապահով եմ որ շատ տեղ իրարու յար և նման իմաստներ պիտի գտնէ։

Հ. Յովհ. Վ. Թորոսեան

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ

ԳԵՆՈՎԱՅ

(Տես յէջ 12)

Շրջագայութիւնք. — Ճիուդեկկա. — Ցիսուսեայք[1]. — Ցիսուսեանք.

27 ապրիլ.

ԱՄԵՆ օր կը տեսնեմ Ցիսիանոսի, Ցինտորետտոյի, Պ. Վերոնացւոյ նկարները. սակայն դեռ չեմ ուզեր անոնց վրայ խօսիլ, կատարեալ և չափազանց ճոխ այնարհ մ'է այն. մանաւանդ այս Ցինտորետտոյ տարօրինակ է, վենետկոյ մէջ միայն կարելի է նորա վրայ զաղափար մ'առնուլ։

Այսօր ամբոխն կ'երթեւեկէ դէպ ի Պարտիզի Տիրամօր եկեղեցին[2], տեսնելու հաւմար իւր մեծամեծ նկարները, Ոսկեդէն հորքի երկրպագութիւնը, Վերչին դատաստանը։ Եկեղեցին զոյ է, նկարները վերուցեր, փաթթեր, զետեղեր են՝ չես գիտեր ո՛ւր. շէնքն երեսի վրայ թողուած կը թուի. կողմնակի կործանած վանք մը կայ, որ տախտակաց մէջերանցի տեղ կը ծառայէ. դալար և խիտ խոտն կը ծլի կամարակապերու եր-

Թէոփիլակտոս և Ցարդելին Բեղա, որ և լատիներէն թարգմանեց զայն (յամին 733) այսու անուամբ. «Libellus de tonitruis». (Corpus Scriptorum Hist. Byzant. ed. Bonnæ, 1837).

1. I Gesuati.

2. Chiesa della Madonna dell'Orto,

կայնութեամբ։ Ահաւասիկ իմ ամենամեծ տհաճութիւններէս մին վենետկոյ մէջ։

Գոնդոլավարն քարաքին հիւսիսային կողմէն շրջան մը կ'ընէ, և այս լուսոյ պաշտամունքին առջեւ կը մոռցուին ամենայն սրբոնեղութիւնք և պարապ եւած յոյսերն։ Զի ձանձրացուիր բնաւ ծովէն, անսահման հոլիզոնէն, ցամաքային հեռաւոր փոքրիկ գոտիներէն՝ որք տարտամ դալարութեան մը ներքեւ վեր կը բարձրանան, ինչպէս նաև գրեթէ ամայի ժողովրդական տարօրինակ փողոցներէն՝ ուր կ'երերան տներու աղեւներն՝ ջրէն մաշուած, ուր խեցիներով պատուած ցիցերու առորտն այնպէս բարակցեր է՝ որ կը վախես թէ արդ պիտի կոտրի։ — Ուրբ ցոր կ'երեւի, վերածնութեան դարու փոքրիկ եկեղեցի մ'է այս, արտաքուստ սպիտակ և անշուք, բայց ի իւր մէկ նրբաձարդ և շքեղ դռնէն։ Ներսը՝ Կղոդիոս Պեռոլի յիշատակարան մը՝ զարդն խնդուած է. նոխ բայց անարուեստ տեսա մարմարիոնէ սափորի մը վրայ ի ցոյց դրած է ննջած փոքրիկ հրեշտակ մը, գէր և առոյգ, կարծես փլանդրիական քերովբէից ազգական. աւելի վարը, կնքագիտական կենդանեաց անարուեստ շքե-

զուխեամբ մը կծկած են պսակազարդ ա-
ռիւծք։ Խաչիոյ մէջ եկեղեցի մը որչափ
զարդարուած և խանգարուած ալ ըլլայ, միշտ
իւր մէջ գեղեցիկ կամ հետաքրքրական բան
մ'ունի. զոր օրինակ, հոս կայ Պարիս Բոր-
դոնի ընտիր նկար մը, մեծամօրուս ծերունի
սուրբ մը, որ իւր խաչը կը տանի երկու
ընկերաց մէջ. և ճիշդ քովը սիրուն քառ-
անկիւն մը սիւնազարդ, որք կամարակապե-
ռով իրարու հետ միացած են, և որոյ ա-
կանների տերեւներով պսակուած ջրամբարն
կ'երեւի հարթ սալայատակի մը վերայ։ Ահա-
ւասիկ այս շրջաղայութեանց վայելչքն. չես
գիտեր ինչ հանդիպելիքը. իբր բոլանդակ
բեռն, երկու կամ երեք անուանքունիս զըլ-
խոյդ մէջ. անշարժ և մեղմով կը սահին
ջրոյ վրայէն. ոչ ոք ձեզի հետ կը խօսի.
կ'անցնիս ոսկեզօծ, նկարներով խճողուած
եկեղեցւոյ մ'առջեւէն, քառորդ մասն քան-
զուած և միայնակ։ Պարմեդ զուրս ե-
լած կը թուիս, և բարեբար ոգի մը կը հա-
ճի հոգւոյդ առջեւէն տեսիլներ և խօլական
երեւոյթներ անցընել։

Գոնդոլն կը բռնէ սրբուհի Քիարայի ե-
կեղեցւոյն երկայնքը և Արիսեան դաշտի
արտաքին կողմը։ Ջրոյն միջոցներն ուրիշ
կ'ընդարձակին, և հովին դանդաղօրէն
կը գլորակէ երինաղարդ ծփանքը, ան-
նկարագրելի խառնուածով մը թաթաւուած և
ձուլուած գոյներու։ Բնաւ տոմսրական ջուրն
չէ սատ։ Ջրանցից մէջ փակուած, մարդ-
կային գաղթականութեան կամկիմամբք և
սպրդմամբ պղտորուած՝ իւր վրան առած է
հողային կարմրութիւններ, կաւաբարային
սմնայն գոյներ, կապտակ և սկայեն սեւու-
թիւններ, այնպէս որ ոչ մը դարձեր է
այն՝ մի և նոյն տատասկի վերայ միասին
խառնուած քսան գոյներու։ Հիւսխային եր-
կընքի մը տակ, տխուր պէտք էր ըլլալ այդ.
արեւու լուսատորութեան և գողտրիկ կապու-
տակեայ մետաքսին ներքեւ՝ զոր կը տարածէ
հոս բոլանդակ երկնային գմբէթն, նա գրեթէ
բնական հանգիստով մը կը լնու աչքերը։
Ստուգիւ կը լուցաս լուսոյ մէջ։ Երկինքն
կը հեղու զայն, ջուրն կը գունատաբէ և ցոլ-
մունք կը հարիւրապատկէն. մինչեւ իսկ սպի-
տակ և վարդագոյն տներն կը ցոլացնեն զայն,
և ձեւերու բանաստեղծութիւնն կը լրացնէ
օրուան բանաստեղծութիւնը։ Այս երեսի
վրայ թողուած խեղճ թաղին մէջ իսկ կը
տեսնուին սիմնազարդ պալատներ և ճակատ-
ներ։ Մինչակ կամ աղքատ տներն ունին
վանդակահիւսերով պատուած մեծամեծ պարաշ-
գամներ, առուղտաձեւերով ժանեկաձեւ ե-
ղած կամ կամարանկիւններով զուխը զար-
դարուած պատուհաններ, տերեւներով և փչե-
ղով հիւսուած հարթ քանդակներ։ Երգն
վրայ կը հասնի, և չես ուզեր անոր մինչէն
դուրս ելնել։ Ճիտղեկկային դրեթէ զատարկ
ջրանցն իւր գեղեցիկ նաւահանգիստը չէն-
ցնելու համար զուր տեղ կը սպասէ նաւա-
տորմիղներու. կ'երազես զոյներու և գծերու
վրայ։ Երեք գիծք և զոյնք կը կազմեն բո-
վանդակ տեսարանը. շարժուն, լրթագոյն և
մեծագին առատ մնիտ ջուրն, որ փայլփլուն
թանձր գունով մը կը պատուակի. վերը՝ հրաշալի
բարձրաքանդակով զատուած՝ շէնքերու շարքն՝
կ'երկայնէ իւր կորութիւնը. հասկ ապա ա-
ւելի վերը՝ պայծառ, անահման և զրեթէ
տժգոյն երկինքն։

Նաւավարն ցամաք կը հասնի և կը տի-
պէ՝ թէ պէտք է Ցիսուսեայց եկեղեցին
տեսնել։ Խառնակարգ վիթխարի սեանց պերճ
ճակատ մը կ'երեւի՝ յեռոյ խմբարան մը՝
որոյ կորնթական սիներն արուեստակեալ
կերպով ապուցուած է լայն սիւնամոյներու
մէջ. կողմնակի կան փոքրիկ մատուռներ, ո-
բոց յունական ճակատներն ունին կորաձեւ
նեցուկներ. խայտախարիւ մարմարիոնէ դը-
բուագ մը, բազմաթիւ արձաններ, անճաշակ
և հարթ քանդակներ, ձեղունի վրայ զար-
դասեռնեի գեղեցիկ նկար մը, մերկ և վար-
դագոյն նուրբ սրունքներ։ — Հանուոտ ը-
սել, ցուրտ շռայլութիւն և ցոյց մը մեծա-
ծախս պաճուճանաց։ Խառնական ուիթեւտաս-
ներորդ դարն վատթարագոյն է քան զմերն։
Մեր ձեռակերտք միշտ չափի մը մէջ կը
մնան, վասն զի նրբութիւն մը կը պահեն.
իսկ անոնք յաղթանակաւ մը կը հանգչին սար-
օրինակութեան մէջ։ Երէկ ասոր նման ու-
րիշ եկեղեցի մ'այլ տեսայ, Ցիսուսեանց ե-
կեղեցին։ Ոլմերու և ձեղունին վրայ գրուա-

digitised by A.R.A.R.@

գուած կը տեսնուին ծաղիկներ և տերեւներ՝ կանաչ և սպիտակ մարմարիոններով։ Կամար-ներու վրայ ոլորուն ոսկեայ գծագրուած են ա-ռաջաբներ, մանրազարդեր և պատուանշաններ, և ամ-բողջութիւնն կը նմանի թաւշակերպ և ոսկեզօծ գահնի թղթի մը, որպ զինն փորձութեան մէջ պիտի ձգէ մեծատուն մը։ Ընթիւ սափորներ, քնարներ, բոցակերպ զարդեր, տերեւներ, և սպիտակ փունջեր կը քանդակեն գմբէթը։ Սպիտակախայտ կանաչ մարմարիոնէ ոլորուն սիւներ վեր կը բռնեն խորանի ամփոփանին, ուր կը սիգան նիներ և զգայուն արձաններ, այսինքն է Քրիստոսն խաչաբաձ, Հայրն Աստուած նստած սպիտակ մարմարիոնէ ա-հագին գուշտի մը վրայ, զորս կը կրեն հրեշ-տակք. երկուքն ևս պատսպարուած են խայ-տառոր մարմարիոնէ տանիքի մը ներքեւ, այն-քան տարօրինակ՝ որ չեռ կրնար ծիծաղդ բռնել։ Անհեթեթ ճոռոմութիւնն մինչեւ իսկ ճարտարապետական մեծ գծերու մէջ կը փայլ-փլլի. նոքա չեն գոհացած սովորական ձեւե-րով. այնքան լայնցուցեր են իրենց խմբա-բանի կամարը՝ որ կամրջի մը կորութեան նմաներ է, զոր և պատսպարեր են գմբէթ-ներով, որք վանանի մը խոռոչին կը նմա-նին։ Կը զգաս երեւակայութեան ճիգը՝ որ ի զուր կ'աշխատի, որ կը վերջանայ չափա-զանց և սեթեւեթեալ խիստներու ճոռոմա-բանութեամբ մը, որ ուռուցիկ և ողորկ բոլոռա-ներով կը յօրինէ գահնի պաշտամունք մը սիկնանց և աշխարհասիրաց համար։

Ակնեալ դարու ամենայն յիմարութիւնք կ'անհեռանան մեծ դարուն երկու պատկերաց դիմաց։ Առաջինն է Ցինտրեատոյի նկարն՝ Վերափոխումն Ս. Կոյսին։ Աստուածածնայ շիրմին շուրջ կողմը՝ ծերունիք խոնարհած կ'ապշին ոգեւորական շարժմամբ։ Նոքա այն տիրական և կոշտ գլխոյ կերպարանքներ ունին՝ որք շատ լաւ կը յարմարին՝ Վենետկոյ նկարիչ-ներու գործոց մէջ՝ ասուեղինաց ասստիկ ճը-մռութիւնն հետ ասուերի, լուսոյ ու գունոյ զօ-ւոր արդեանց։ Ուշէլի վերը, սուրբ Կոյսն կը պտուտկի, և իւր մանիշակեայ պարեգօտին ծոգոյն, թաթաւուած և փոփոխական երանգ-ներն աւելի ևս զգալի կ'ընեն իւր կորսվի թուխ դէմքը, իւր փոքրիկ ճակատը, իւր վայրահակ մազերը, իւր այրական կեցուածքը։ Հասարակ կին մը, ոչխոյի մը պէս ազնիւ և շքեղ, ահաւասիկ այս է աչքերու զարնող երեւոյթն. ո՛չ մի նկարիչ ասկէ աւելի անսորժած չէ պերճութիւնը և ուժոյ անկեղծութիւնը։

Ցինտրեատոյ փողոցաց մէջ վաճառուէի կամ նաւակարուէի մը կը տեսնէ, և նորա ամ-բողջ և վայրենի պատկերը կ'ասնա, զայն կը քաղարկէ ազնուական և արուեստեան փայլ-մամբ իշխանական սովորութեանց, նորա չորս կողմը կը լեցնէ բազմաթիւ թեւաւոր զլուխ-ներ, և զանոնք կը տարածէ մինչեւ առաքելոց լաթերուն վրայ։ Բնաւ չի վրդովիր նա, եթէ երբեք իւր հրեշտակաց թռիչն նմանի կարուած գլուխներու սկաւառակի մը, նա իւր վայրկե-նական երեւումը՝ մէկ շնչով կուտի մը վրայ փոխադրելով՝ կը թողու կ'երթայ. իւր ձեռա-գործն կատարուած է։

Միւս պատկերն է Ցիտիանոսի սուրբ Լաւրենտիոս մը, որ կը թռի խաչացի Դամբասանտի երեւակայութիւն մը, ասուերի մէջ տեսել մը։ Գիշեր է. ի սկզբան՝ աչք ահա-գին սեւութիւն մը միայն կը նշմարեն, որ տարտամօրէն կը բծաւորուի երկու կամ ե-րեք լոյսերով։ Ընդարձակ փողոց մ'է այս։ Ներքնատան մէջ մարող ջահի մը ցոլքի նը-ման ամոյն զոյնի մը մէջ կը տեսնուին ճարտարապետութիւնք, արձան մը, հեռաւոր ամբոխ մը։ Երկանէ վանդակի մը մէջ փա-կուած տեսակ մը ջահ գաւազանի մը ծայրը՝ կը լուսաւորէ տարօրինակ լապտեր մը, և կրակին բոցն կը տարածէ ստլայատակին վրայ իւր չա-բաշաչակ կարմրութիւնքը։ Ինոր մտա, գա-ռող գահիճ մը, իբր խեղճ բեռնակիր, ե-տեւը կը ծռի, և իւր կրծոց մկանքն կ'ուռչն գինեգոյն տեսլեամբք և սատանի զուրս ցցուե-լով իւր հերակլեան մարմնոյն վրայ. անոր չորս կողմն սեւ ցոլմունք կ'անդրադառնան զրա-հից վրայ կամ կը զողզոան նիզակաց կապուտակ պողպատին վրայ։ Մակայն երկնից վերէն կ'ինչնէ լուսոյ ցայտում մը, ճեղքելով մթու-թիւնքը իբրեւ փառք մը. լուսաւոր գիծն կը հասնի մարտիրոսի սպիտակ մարմնոյն վրայ, ցոլացնելով իւր անցքին վերայ գեղնսրակ փայլումները, աղօտ բարախումները և ասուերի փոշիներու խարհրդաւոր թրթռումը։

digitised by A.R.A.R.@

Լիդդ. — Ծովն. — Սուրբ Մարկոսի զան-
գակատունն. — Քաղաքն, ջուրն եւ ա-
ւազք.

Անկարելի է հոս երազելէն զատ ուրիշ բան մ՝ ընել. նոյն իսկ երազելն ալ սխալ բառ մ՝ է, վասն զի կը նշանակէ ըղեղի պարզ ապրիս անգին պտոյտ մը, տարտամ զա-ղափարաց երթեւեկ մը. եթէ վենետկոյ մէջ կ՝ երազուիս, այս՝ զգայութեամբք միայն կ՝ ըլ-լայ և ոչ գաղափարներով։ Այսոր հարիւրերորդ անգամն է, որ արեւը մտնելու պահուն՝ ես կը դիտեմ ծովու ջրոյն առած նորօրինակ գոյնը շուրջակայ աւազակոյտերէն. ատոնք փլո-ղեւտեան անագապղնձի խարտեաշ գոյներ են, որոց մէջ ոլորտապտոյտ կը սողան երկայն ազատապայլք։ Արեւմտեան կարմրութիւնն կը նկարուի հոն և կը փոփոխի կանաչորակ կամ կարմրորակ նարնջի գոյներով։ Մերթ գոյնն արշալուսային է, իբր մետաքսեայ ատուեղէն մը՝ որ կ՝ ուռի և կ՝ ոլորուի հողմոյն փչմամբն։ Միւս կողմէն, ահագին կապուտակ մակերեւու-թիւն անթիւ անտեսանելի ծփծփմունք կը խաղնուին, կը միանան, և կը սփռեն ընդ մէջ երկնից և ծովու՝ ճառագայթաէջ սպիտա-կութեանց հիւսուած մը. նաւակն կը լուղայ լուսոյն մէջ. միայն նորա շարժը կը տեսնուի կապուտախառն կանաչն, միշտ փոփոխական, միշտ մի և նոյն։

Ցամէ մը վերջը Լիդդ կը հասնիս. սա երկայն աւազակոյտ մ՝ է, որ կը պաշտպանէ վենետիկը բուն ծովուն դէմ։ Մէջտեղը կայ եկեղեցի մը իր գիւղին ի միասին, բոլոր չորս կողմը պարսպէղներ կան՝ որոնք յարգէ խար-ներով պատուած և նորատունկ պաղատու ծա-ռերով լեցուած են. ամենն ալ ծաղկաւէտ։ Զանակողմն, ընկղմած կը տեսնուի ուղի մը հինաւուրց ծառերու՝ որոնք դալարացեր են նոր զարնան սկսելովն. ստոյգ բոլորակ զագաթներն սպիտակ են ինչպէս ամուսնացելոց փնջերն։ Ցա-ռաջ կ՝ երթաս, և երեք հարիւր քայլ այնդին կը տեսնես մեծ ծովը, ոչ եւս անշարժ և փոփ-խական վենետկոյ լճակին պէս, այլ վայրագ և մռնչող, յաւէժական բաղխմամբ իր մակ-ընթացութեան ու տեղատուութեան, և իր ալեաց փրփրալից եռացմամբ։ Ոչ որ կայ այս երկայն աւազեղէն գօտւոյն վրայ, շատ շատ, իրարմէ հեռու, կը տեսնուի թումբի անկեան մէջ պահնորդի մը գոշշագոյն լօգին։ Բնաւ չի լսուիր մարդկային աղաղակ։ Լռու-թեան մէջ յառաջ կ՝ երթաս, և հետզհետէ կը թաղուիս բնութեան միօրինակ անգին ձայնին մէջ. քայլերդ կը տպուին թաց ա-ւազին վրայ. ոտքերդ կը ճարճատեցնեն խե-ցիները որք կը ճռճռան. հարիւրաւոր փոքրիկ խեչափառք ծուռ քայլուածքով մը խոյս կու տան, և ալիքն զանոնք այնպէս շուտ կը տանի՝ որ իսկոյն գետնին տակ կը ծած-կուին։ Սակայն գիշերն վրայ կը հասնի, և արեւելեան կողմը, գիմացը, ամենայն ինչ կը մթնայ։ Մթութեան մէջ՝ որ երթալով կը թանձրանայ՝ կ՝ որոշուին տակաւին նա-ւերու երկու կամ երեք սպիտակ առագաստք. նոքա կ՝ անհետանան. ջրոյն կանաչորակ գոյ-ներն երթալով կը մթնան և կ՝ ընկղմին հա-մատարած գիշերուան մէջ. միայն մերթ ընդ մերթ ալիք մը կը գլորակէ իւր անսրոյ փրփուրը և կը շաչիշաչուի երերմամբ ընդդէմ ծովեղերաց։ Իբրեւ հեռաւոր որսական շանց խմբի մը խուլ աղաղակ, ամեն կողմերէ կը լսուի անխախտան խեղդուկ մռնչիւն մը, որ՝ միւս զգացմանց թըմ-բերու պահուն, իւր սպառնալեաց հոգւոյն վրայ կը յարձրկի, և այն ժամանակ կը զտնես վե-նետկոյ մէջ կորսնցուցած գաղափարդ. այսինքն է՝ ծովուն անմուտանելի զօրութեան և չարու-թեան գաղափարը։

Ի դարձին, արեւմտեան կողմի երկինքն վառած կրակի մը կը նմանի, և տուներու, զանգակատանց և եկեղեցեաց պատնէշն իւր անթափանցիկ սեւութեամբ կը գծէ վառվռուն կարմրութիւնը։ Ցիրաւի, պատկերն է այս ահաւոր հրդեհի մը՝ կը պատահի երբ երկրա-գործոյս տատանմանց ժամանակ՝ հրաբխական խանձոդի ժայթքում մը տակնուվրայ կ՝ ընե դարաւոր բնականութիւնը։ Կարծես թէ կառուցած հնոց մը կը շողշողէ վարը, ա-ջաց տարածութեան սահմանէն դուրս. սակայն աջաց տարածութեան սահմանին մէջ են կայ-ծերու թռիչքն՝ հանդերձ նեմ ծիրանի զու-նով կոնդեներուն՝ որք դեռ կ՝ այրին, և ածուխ-ներն՝ սրբ շիջած, իջած և պիզուած են՝ ա-

digitised by A.R.A.R.@

հագին անտառներու խորտակմամբ և ճաղ-ճառմամբ։ Իրենց սխրատեսիլ ստուերքն եր-կայնելով յանկուն կարմրորակ ջրոյն մէջ՝ կ'երթան կ' անհետանան գիշերուան մէջ, որ արդէն իւր պատանքը դրած է բարձր ծո-ղուն վրայ։

29 ապրիլ.

Խոստացայ գրել քեզ վենետկեան նկար-չութեան վրայ, և օրէ օր կ' ուշացնեմ։ Հոս շատ մեծամեծ ձեռագործք կան, և ձեռա-գործն շատ եզական է. շատ զգացմունք կան, հոս կեանքն լիուլի և երազ է. ինչպէս կանաչ և թանձրախիտ անտառի մը մէջ՝ շատ աւելի գիւրին է նստիլ և դիտել քան ճամ-բայ մը փնտռել կամ՝ ամբողջութիւն մը ըմբռնել. կը թողուս ինք գինքդ որ երթայ, կը ծուլանաս. միշտ մոքէդ կ' անցընես, թէ պէտք է տեսնել այս կամ այն ինչ բանը։ Օրդ կ' աւարտես յոգնած ու գագրած մարմնով և հոգւով. կ' ըսես. վաղը։ Երկրորդ օրը, նոր մտածութիւն մը միտքդ կու գայ։ Զոր օրի-նակ, այսօր, առաւօտեան մէջոց, սուրբ Մար-կոսի զանգակատունը եղայ։

Վենետիկ ու բովանդակ լճակն կը տես-նուի զանգակատան վրայէն. այս բարձրութեան վրայ մարդկեղէն ձեռակերտք կը նմանին կուղ-բերու ձեռագործի մը. բնութիւնն կ' երեւի, ինչպէս որ է, միայնակ, ահագին, հազիւ-քերուած կամ արատաւորուած մեր առօրեայ փոքրիկ կենցաղ։ Ամենայն ինչ աւաղ է և ծուլ. միահարթ մակերեւոյթ մը միայն կը տես-նուի, զոցուած հիւսիսային կողմէն ձիւնապատ սարերու պարպոյլ մը, որ և տեսակ մը մի-ջին սահման է ընդ մէջ չոր և խոնաւ տա-րերց, անքեր վայրենի երկիր մը, մթին աւազներով և փայլփլուն ջրերով նոր-օրինակ գոյներ առած։ Ցորոլու ջրոյն ճա-մամբ և նուազմամբ թրջած կարմրագոյն կղզեակներն եւս ունին թիթեղնաքարի աղօտ ցոլմունք։ Զորս կողմը, ոլորտապտոյտ ջրը-մուղներ, անշարժ ջրաշղջերն՝ կը խառնակեն իրենց ձեւերուն անքաւ խառնափնդորութիւնը և իրենց կապարագոյն ջրոց մետաղեայ արշնպե-ղերը։ Ամապատ մ' է այս, անապատ մը տար-օրինակ և մեռեալ։ Զկայ ինչ կենդանի, բաց ի խումբ մի նաւերէն՝ որոնք կը մըտ-նեն և կը տատանին իրենց նարնջագոյն առագաստից ներքեւ։ Լիզոյի միւս կող-մէն, մերթ ընդ մերթ, ամպոց մէջ արեւու ճառագայթ մը ահագին ծուլուն վրայ փայլ-փլուն գիծ մը կը ձգէ, մթագոյն կրկնոց մը՝ կտրող սրոյ փայլի մը նման։ Կարելի է ժա-մերով կենալ հոս, մտնալ ամենայն մարդ-կային շահ՝ կրկին մեծամեծ իրաց միօրի-նակ խոստացութեան առջեւ, այսինքն են՝ գա-զաձեւ երկինքն և միահարթ երկիրն, որք կը զրաւեն մէջոցը և բնութեան տեսարանը։ Երկաբին մէջ, դեղնագոյն ամպոց խմբերն կը թաւալին փչմամբ ծովային հողմոյն։ Հետ-գիտեմ կը հասնին դրան լուսնի նորը և փայլ-փլուն մահիկին դիմաց. լուսինն, անպաղար կ' ընկղմէ իւր նորը թիթեղը անոնց զանգուա-ծոյն մէջ, ինչպէս մանգաղն հասունցած ցո-ղենեներու հունձքին մէջ։

Շարայարելի.

digitised by A.R.A.R.@